ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ 2019-20 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ ԵՎ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐ

Ներկայումս համալսարանն ունի շուրջ 108 կնքված պայմանագրեր հայաստանյան, եվրոպական, ամերիկյան և ԱՊՀ տարբեր բուհերի և միջազգային կազմակերպությունների հետ: Այդ շրջանակներում համալսարանն ակտիվորեն համագործակցում է շուրջ 20 բուհերի և կազմակերպությունների հետ:

2019-20 ուս. տարում կնքվել կամ վերահաստատվել են համագործակցության 11 հուշագրեր և պայմանագրեր.

- Կորդոբայի համալսարան (Իսպանիա)
- Արմին Օֆող հոլդինգ (Իրան)
- Ազգային Չիայո Թանգ համալսարան, Հսինչու (Թայվան)
- Բհարատիայի ճարտարագիտության, գիտության և տեխնոլոգիական նորարարության համալսարան (Անանտափուր, Անդիրա Պրադեշ, Հնդկաստան)
- Յարոսլավլի պետական գյուղատնտեսական ակադեմիա (ՌԴ)
- Մ. Դուլատովի անվ. Կոստանայի ինժեներա-տնտեսագիտական համալսարան (Ղազախստան)
- Վահենշտեֆանի Կիրառական Գիտությունների համալսարան (Գերմանիա)
- Տաջիկստանի տեխնիկական համալսարանի Խուջանդի պոլիտեխնիկական ինստիտուտ (Տաջիկստան)
- Կրթական հաստատություն Բելոռուսի պետական ագրոտեխնիկական համալսարան (Բելառուս)
- Նիկոլաևի պետական ագրարային համալսարան (ՌԴ)
- Օմսկի պետական ագրարային համալսարան (ՌԴ)

Կնքված պայմանագրերի մի մասով իրականացվում է համագործակցություն, իսկ մյուսների հետ յան դեռ բացակայում է: ՀԱԱՀ-ն մասնակցում է նաև Կենտրոնական Ասիայի և Հարավային Կովկասի գյուղատնտեսական համալսարանների ասոցիացիայի (CASCADE) աշխատանքներին, որի շրջանակներում պարբերաբար իրականացվում են հանդիպումներ և քննարկումներ:

ԷՐԱԶՄՈՒՍ+ ՀԳ1 ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ՀԱԱՀ-ի ուսանողների և աշխատակիցների շարժունության հիմնական գործիքը Էրազմուս+ միջազգային կրեդիտային շարժունություն ծրագիրն է: 2019-20 թթ. դրա շրջանակներում իրականացվել են բազմաթիվ դասավանդումներ, վերապատրաստումներ և ուսուցում՝ համագործակցելով շուրջ 30 տարբեր եվրոպական համալսարանների հետ: 2019-20 ուս. տարվա ընթացքում ՀԱԱՀ-ն ունեցել է 35 Էրազմուս+ ՀԳ1 ծրագրեր, որից 22-ը՝ նոր, հաստատված 2019 թ.-ին նոր (2018-19 թթ-ին՝ 19 նոր), իսկ 13-ը՝ 2018-19 ուս. տարվանից: Հատկանշական է, որ ՀԱԱՀ-ի հին գործընկեր համալսարանների հետ կապը չի խզվում, բայց միաժամանակ ավելանում են նաև նոր գործընկեր-բուհեր:

Էրազմուս+ շարժունության տվյալներ

		Արտագնա		Ներգնա
	Հաստատություն	աշխատակից	ուսանող	աշխատակից
1.	Միգել Հերնանդեսի անվան համալսարան, Իսպանիա			4
2.	Ալմերիայի համալսարան, Իսպանիա		3	
3.	Արևմտյան Ատիկայի համալսարան, Հունաստան		2	
4.	Պիրեուսի համալսարան, Հունաստան		1	
5.	Ռուսեի Անջել Կանչևի համալսարան, Բուլղարիա	1		

6.	Վիեննայի բնական ռեսուրսների և բնական գիտությունների համալսարան, Ավստրիա	2	1	
7.	Մինհոյի համալսարան, Պորտուգալիա		1	
8.	Գայզենհայմի գինու համալսարան, Գերմանիա	2	7	
9.	Կլուժ Նապոկայի գյուղատնտեսական գիտությունների և անասնաբուժական բժշկագիտության համալսարան, Ռումինիա		4	
10.	Թրոմսոյի համալսարան (Նորվեգիայի արկտիկական համալսարան)	1	3	
11.	Պանթեոնի համալսարան, Հունաստան		1	
	Ընդամենը	6	23	4



Հատկանշական է, որ այս տարի առաջին անգամ ՀԱԱՀ-ն իրականացրեց ուսանողների պրակտիկաների համար նախատեսված Էրազմուս+ շարժունության ծրագրեր, որի շրջանակներում 4 ուսանողներ արտադրական պրակտիկա անցան Գայզենհայմի գինու համալսարանում, Կլուժ Նապոկայի համալսարանում և Թրոմսոյի համալսարանում:

COVID-19 համավարակի հետևանքով հետաձգվեցին նախորոք պլանավորված ավելի քան 25 աշխատակիցների գործուղումներ (Ավստրիայի բնական ռեսուրսների և բնական գիտությունների համալսարան, Արևմտյան Ատտիկայի համալսարան, Կատովիցեի Սիլեսիայի համալսարան, Պիրեուսի համալսարան, Ֆոջջայի

համալսարան, Էլչեի Միգել Հերնանդեսի համալսարան, Կլուժ Նապոկայի գյուղատնտեսական գիտությունների և անասնաբուժական բժշկագիտության համալսարան, Ռադբաուդի համալսարան): Միաժամանակ հետաձգվեցին նաև ՀԱԱՀ ժամանումները: Էրազմուս+ ՀԳ1-ի այն ծրագրերը, որոնց ավարտը նախատեսված էր 2020 թ.-ի հուլիսը, երկարաձգվեցին մինչև 2021 թ.-ի ամառ:

ԷՐԱԶՄՈՒՍ+ ՀԳ2 ԾՐԱԳՐԵՐ

ՀԱԱՀ-ում շարունակվում է ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանն ուղղված թվով 2 *Էրազմուս+ Հիմնական Գործողություն-2 ծրագրերի* իրականացումը*:*

«Տեսական ուղղվածությունից անցում դեպի գործնական կրթության ագրարային ուսուցման ոլորտում» (TOPAS) ծրագիրի շրջանակներում հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են 3 աշխատանքային հանդիպումներ Կասսելի համալսարանում, Յաշիի գյուղատնտեսական գիտությունների և անասնաբուժական բժշկագիտության համալսարանում և ԵՊՀ-ում: Կասսելի համալսարնում բացի ծրագրային հանդիպումից, բոլոր մասնակիցները մասնակցեցին այդ համալսարանում կազմակերպված միջազգային գիտաժողովում, որտեղ ՀԱԱՀ-ն հանդես եկավ ելույթով և պոստերով: Հանդիպումների ընթացքում քննարկվել է ծրագրի կատարողականը, մշակվել են հետագա քայլերը և այլ ծրագրային հարցեր: TOPAS-ի շրջանակներում կատարվել են 2 դասախոսների և 8 ուսանողների վերապատրաստումներ:

Ծրագրի շրջանակներում բենչմարքինգի միջոցով վերանայվեց և արդիականացվեց նոր՝ Ագրոպարենային համակարգի էկոնոմիկա մագիստրոսական կրթական ծրագրի ուսումնական պլանն ու վերջնաարդյունքները:

2019 թ.-ի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Ագրոբիզնեսի և տնտեսագիտության 30-ից ավելի դասախոսներ վերապատրաստվեցին տվյալների հավաքագրման և մշակման ուղղությամբ, որը TOPAS-ի վերջնաարդյունքներից մեկն է: Վերջնականացվեցին նաև MOOC-ի աշխատանքները, որոնք հասանելի են արդեն ուսանողներին և դասախոսներին: Ներկայումս աշխատանքներ են տարվում ձեռնարկի ամբողջականացման համար:

«Կենսաարտադրանքների տեխնոլոգիայի ոլորտում գերազանցության հայկական ցանց» (AbioNet) ծրագիրի շրջանակներում իրականացավ 1 ծրագրային հանդիպում Սալոնիկում (հոկտեմբեր, 2019): Ծրագրի շրջանակներում վերջնականացվեց սննդամթերքի անվտանգության մագիստրոսական ուսումնական պլանն ու վերջնաարդյունքները, մոդուլային ծրագրերը: Ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել լաբորատոր գույք, որը հիմք կհանդիսանա սննդամթերքի անվտանգության և որակի վերահսկման ուղղությամբ նոր լաբորատորիայի ստեղծման համար:

2020 թ.-ի ապրիլին Հայաստանում Էրազմուս+ ազգային գրասենյակի կողմից անցկացվեց ABioNet ծրագրի մոնիթորինգ, որի արդյունքները դրական էին ՀԱԱՀ-ում կատարվող գործընթացների տեսակետից:

ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐ

2020թ.-ի համար հաստատված կարևոր նախագծերից է ICARE հիմնադրամի հետ համատեղ իրականացվելիք Ֆրութենիա նախագիծը, որի շնորհիվ արդիականացվելու են ագրոնամիական առարկաները, ներդրվելու են դասավանդման նոր մեթոդներ, Ոսկեհատի տնտեսությունում հիմնվելու է ինտենսիվ պտղատու այգի, կազմակերպվելու է ուսանողական ճամբար և այլն:

«Նորարարական գյուղատնտեսության վերապատրաստման եւ ուսուցման ճամբար (ԱԳՐԻ ՔԵՄՓ)» նախագիծն իրականացվելու է Ագրոբիզնեսի հետազոտությունների եւ կրթության միջազգային կենտրոն (ICARE) հիմնադրամի հետ համատեղ: Նախագիծը նպատակ է հետապնդում, ինչպես անվանումն է հուշում, ստեղծել գյուղատնտեսության թեմաներով վերապատրաստման եւ ուսուցման նորարարական ճամբար՝ մասնավոր հատվածի, ուսանողների եւ երիտասարդ մասնագետների միջեւ համագործակցության զարգացման միջոցով թիրախային խմբերի գյուղատնտեսական մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները հզորացնելու եւ տարածելու համար:

ԱՐՏԵՐԿՐՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՄԱԺՈՂՈՎՆԵՐ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ

Մասնակցություն գիտաժողովներին և համաժողովներին: 2019-2020 ուսումնական տարում ՀԱԱՀ 25-ից ավելի աշխատակիցներ մասնակցել են մի շարք միջազգային գիտաժողովների և համաժողովների: Դրանք են.

- Գյուղատնտեսություն եւ այգեգործություն 14-րդ միջազգային գիտաժողով (Իտալիա)
- Գիտության և տեխնոլոգիաների եվրոպական համագործակցության COST Action CA-18134 Գենոմային կենսաբազմազանության իմացությունը էկոհամակարգերի կայունության համար ծրագրի հանդիպում (Բոսնիա և Հերցոգովինա)
- Ինովեյթ Արմենիա ծրագրի հանդիպում (ԱՄՆ)
- Biodiversity Information for Development ծրագրի առաջին փուլի ամփոփիչ համաժողով (Բելգիա)
- Գյուղատնտեսության ոլորտում գլոբալ հետազոտությունների առցանց հասանելիության տարածաշրջանային աշխատաժողով (Մոլդովա)
- Tropentag ամենամյա գիտաժողով (Գերմանիա)
- HE for Employability ծրագրի հանդիպում (Ուզբեկստան)
- GIZ Կենսաբազմազանության ինտեգրված կառավարում ծրագրի աջակցությամբ ուսուցողական այց (Ղրղզստան)
- Քաղաքականության մշակողների ցանցի ուսումնական ծրագիր և Բուխարեստ 2019 ֆորում (Ռումինիա)
- Թաիրովի անվան խաղողագործության և գինեգործության ինստիտուտի 160-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների շարք (Ուկրաինա)
- Եվրոպական գիտության հիմնադրամի բնապահպանական գիտությունների, հողի աղտոտման և գյուղատնտեսական գիտությունների գնահատման հարթակի վերջնական հանդիպում (Ֆրանսիա)
- Միջազգային անասնապահական ցուցահանդես-վաճառք (Ֆրանսիա)
- Տնտեսության զարգացման ռազմավարական ուղղությունները գիտաժողով (Վրաստան)
- Կենսաանվտանգություն և կենսաապահովություն միջազգային սիմպոզիում (Վրաստան)

- Գյուղատնտեսական տեխնիկայի սարքավորումների և բուսաբուծական գյուղ. մթերքների արտադրության ու վերամշակման նյութերի 26-րդ միջազգային ցուցահանդես (Ռուսաստան)
- ՌԴ գիտությունների Ստեկլովի անվան մաթեմատիկական ինստիտուտի միջազգային գիտաժողով (Ռուսաստան)
- Հողագիտության և սննդի անվտանգության ամենամյա 4-րդ միջազգային գիտապրակտիկ գիտաժողով (Ռուսաստան)
- Արտադրությունը, գիտությունը և կրթությունը տրանսֆորմացիաների դարաշրջանում թեմայով 6-րդ միջազգային կոնգրես (Ռուսաստան)
- Միջազգային գիտաժողով Յալթայում (Ռուսաստան)
- «Եվրասիայում գյուղատնտեսության, պարոնային անվտանգության և սնուցման» 4-րդ ամենամյա միջազգային գիտաժողով (Ռուսաստան)
- Սննդի քիմիա և կիրառություններ խորագրով 22-րդ միջազգային գիտաժողով (Արաբական Միացյալ Էմիրություններ)
- ՀԱԱՀ-ի ռեկտոր Վարդան Ուռուտյանը մասնակցեց Պարենային քաղաքականության միջազգային հետազոտական ինստիտուտի (IFPRI) «Համաշխարհային պարենային քաղաքականության՝ Եվրասիայի վերաբերյալ 2020թ.-ի զեկույցի» արդյունքների և Եվրասիական տարածաշրջանի ագրոպարենային համակարգերի վրա ՔՈՎԻԴ-19-ի ազդեցության առցանց քննարկմանը:
- Հոբելյանական առցանց հանդիպում-քննարկում CASCADE կոնսորցիումի շրջանակներում:

ՀԱԱՀ ներկայացուցիչները առցանց եղանակով մասնակցել են նաև Ղազախստանի ազգային ագրարարային համալսարանի և Անասնաբուծության և կենսառեսուրսների գիտահետազոտական ինստիտուտի կողմից կազմակերպված միջազգային գիտաժողովին, որը նվիրված էր գյուղատնտեսական կենդանիների սաղմերի փոխպատվաստման խնդիրներին, նույն համալսարանի կողմից կազմակերպված «Երիտասարդ գիտնականների երկխոսություն. գիտական զրույցներ» 2-րդ միջազգային համաժողովին,

Հատկանշանակն է, որ շատանում են նաև համագործակցության դեպքերը միջին ասիական երկրների հետ: Այսպես, ՀԱԱՀ 2 դասախոսներ առցանց դասախոսություններ են վարել Թուրքմենստանի Ս. Ա. Նիյազովի անվան գյուղատնտեսական համալսարանի ուսանողների համար:

Միջազգային շաբաթներ: 2019-2020 ուսումնական տարում ՄԿԴ 4 և ՀԱԱՀ այլ ստորաբաժանումների ավելի քան 10 աշխատակիցներ պետք է մասնակցեին ՀԱԱՀ համագործակցող համալսարանների կողմից կազմակերպվող միջազգային շաբաթներին: Սակայն COVID-19 պանդեմիայի հետևանքով բոլոր միջազգային շաբաթները հետաձգվեցին, և դրանք կիրականացվեն իրավիճակի կարգավորումից հետո:

Վերապատրաստումներ: 2019-2019 ուսումնական տարում այլ (բացի Էրազմուս+-ից) ծրագրերով վերապատրաստման մեկնել են ՀԱԱՀ 16 աշխատակիցներ.

- *Անասնաբուժական կրթագիտական գերազանցության կենտրոն* դրամաշնորհային ծրագրի շրջանակներում վերապատրաստում Բարսելոնայի ինքնավար համալսարանում (Իսպանիա):
- Սննդի անվտանգության վերահսկում, արտահանման և ներմուծման անվտանգության վերահսկում թեմայով երկկողմանի սեմինար (Չինաստան):
- Մեկ գոտի մեկ ճանապարհ երկրների համար չորային և կիսաչորային շրջաններում ջրախնայող ոռոգման տեխնոլոգիաների զարգացման թեմայով դասընթաց (Չինաստան):
- *Making agriculture work for food and nutrition security* դասընթաց Վախենինգենի համալսարանում (Նիդերլանդներ):
- Վայնշտեֆան-Թրիսդորֆի համալսարանի կողմից կազմակերպված վերապատրաստում (Գերմանիա), որի շրջանակներում վերապատրաստվեցին ՀԱԱՀ 4 աշխատակիցներ
- Պարենի անվտանգության եվրասիական կենտրոնի կողմից համալսարանական դասախոսների համար կազմակերպված case study մեթոդով դասավանդման հմտությունների վերապատրաստում Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանում (Ռուսաստան), որի շրջանակներում վերապատրաստվեցին ՀԱԱՀ 3 աշխատակիցներ

- Ֆինանսների նախարարության և ԱՄԳ կողմից կազմակերպված "Gender Budjeting" թեմայով վերապատրաստում (Ավստրիա):
- The FAO-GSP Global Soil Saliinity Map (GSS map) ծրագրի ուսուցման դասընթաց (Ռուսաստան):

2020 թ. հունիսին ՀԱԱՀ 20 աշխատակիցներ մասնակցեցին Ղազախստանի ազգային ագրարային համալսարանի կազմակերպած Միջազգային ամառային դպրոց երկշաբաթյա առցանց վերապատրաստմանը, որի ընթացքում քննարկվել են պարենային ապահովության հիմնախնդիրներին, համաշխարհային տնտեսությունում COVID-19-ի հետևանքներին, կապույտ էկոնոմիկային և ծովային առեւտրին, կլիմայի փոփոխությանը և գլոբալ տաքացման միտումներին առնչվող և այլ հարցեր:

Ներկայումս ՀԱԱՀ 2 աշխատակիցներ մասնակցում են Միջազգային կրթության ամերիկյան խորհուրդների հայաստանյան գրասենյակի կողմից կազմակերպված առցանց վերապատրաստմանը բուհերի միջազգայնացման ուղղությամբ, որի շրջանակներում ՀԱԱՀ ներկայացուցիչները հունիսին մասնակցեցին Միջազգային կրթությունը COVID-19-ից հետո առցանց քննարկմանը:

ՀԱԱՀ-ՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՍԵՄԻՆԱՐՆԵՐ, ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Հոկտեմբերին ՄԿԴ-ի կողմից իրականացվեց հերթական երկօրյա հանդիպումները ներքին շահառուների հետ, որի ընթացքում ՄԿԴ աշխատակիցները ներկաներին ծանոթացրեցին առկա միջազգային ծրագրերին, դրանց դիմելու առանձնահատկություններին և այլ հարցերի, որոնք վերաբերում են հատկապես շարժունությանը:

Նույն ամսում ՀԱԱՀ-ն հյուրընկալեց Չիաո Թունգ համալսարանի մասնագետներին, որոնց օժանդակությամբ համալսարանում կստեղծվի հեռավար կառավարմամբ խելացի ջերմատուն:

2019 թ. նոյեմբերի 14-ին ՄԿԴ աջակցությամբ գործնական ուսուցում տեղի ունեցավ՝ «Ինչպես գրել եւ տպագրել գիտահետազոտական աշխատանք» թեմայով, որը

միաժամանակ հանդիսացավ 2 բանախոսների՝ Էրազմուս+-ի վերապատրաստումների արդյունքների տարածում:

2019 թ. նոյեմբերին ՀԱԱՀ-ն հյուրընկալող հարթակ դարձավ սննդամթերքի անվտանգությանը վերաբերող 20-օրյա վերապատրաստումների իրականացման համար: Այն կազմակերպել էր Չինաստանի սննդի և խմորման արդյունաբերության պետական գիտահետազոտական ինստիտուտը՝ ՉԺՀ կոմերցիայի նախարարության աջակցությամբ:

2019 թ. դեկտեմբերին ՀԱԱՀ-ն հյուրընկալեց Բելառուսի և ԱՄՆ-ի արտակարգ և լիազոր դեսպաններին: Հանդիպումների ժամանակ քննարկվեցին դեսպանությունների և համալսարանի միջև գործակցության հնարավորություններին առնչվող հարցեր:

ՀԱԱՀ-ի ագրոտեխնոլոգիական աքսելերատորի (ImpactAim ANAU AgriTech Accelerator) ծրագրի պաշտոնական մեկնարկը տրվեց 2020թ. հունիսի 9-ին կազմակերպված վեբինարի միջոցով: Ծրագիրն իրականացնում է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի ImpactAIM աքսելերատորը՝ ՀԱԱՀ-ի, Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամի (FAST), ICARE հիմնադրամի և Nation in Action հարթակի հետ՝ Հայաստանի Կայուն զարգացման նպատակների ազգային նորարարական կենտրոնի և Ասիական զարգացման բանկի աջակցությամբ:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀԱԱՀ-ում հյուրընկալվեցին տարբեր համալսարանների ռեկտորներ և ներկայացուցիչներ (Վիրջինիա Թեք Գյուղատնտեսության և կենսագիտության քոլեջի դեկանի տեղակալ և քոլեջի գլոբալ ծրագրերի տնօրեն, Նորվեգիայի արկտիկական համալսարանի ռեկտոր, Հայաստանում ամերիկյան համալսարանի նախագահ, Յարոսլավլի պետական գյուղատնտեսական ակադեմիայի ռեկտոր), որոնք քննարկեցին երկկողմանի համագործակցության խորացման հնարավորություններն ու ուղղությունները:

ՀՀ-ՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՍԵՄԻՆԱՐՆԵՐ, ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

2019-20 ուս. տարվա ընթացքում ՀԱԱՀ-ի տարբեր ստորաբաժանումների աշխատակիցները մասնակցել են ՀՀ-ում կազմակերպված տարաբնույթ

միջոցառումների: Նշենք, որ այս տարի կազմակերպված միջոցառումների քանակը համեմատաբար պակաս է նախորդ տարիների համեմատությամբ, որի պատճառը COVID-19 պանդեմիան է:

ՄԿԴ-ի աշխատակիցները նախորդ տարիների նման ակտիվորեն մասնակցել են Էրազմուս+ ազգային գրասենյակի կողմից կազմակերպված տարաբնույթ միջոցառումներին և հանդիպումներին: 2019 թ. նոյեմբերի 7-8-ին ՀՀ ԿԳՄՍ նախարարությունում և Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում տեղի ունեցան ամենամյա Էրազմուս+ տեղեկատվական օրերը, որին մասնակցեցին նաև ներկայացուցիչներ 13 իսպանական համալսարաններից և Էրազմուս+ իսպանական ազգային գործակալությունից (SEPIE): ՄԿԴ-ի ակտիվ շփումների միջոցով նոր կապեր հաստատվեցին 4-5 իսպանական նոր համալսարանների հետ (Սևիլիայի համալսարան, Վալլադոլիդի համալսարան, Գալիցիայի տարածաշրջանի կրթական գործակալություն և այլն): Իսկ ՄԿԴ պետ Գ. Համբարձումյանը հանդիպման 2-րդ օրը որպես հրավիրյալ անդամ մասնակցեց շարժունությանը վերաբերող պանելային քննարկմանը:

ՄԿԴ աշխատակիցները 2019 թ. հոկտեմբերին մասնակցեցին Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայում կազմակերպված հայաստանյան բուհերի միջազգային բաժինների ներկայացուցիչների հերթական հանդիպմանը, որի ընթացքում քննարկվեցին Էրազմուս+ ծրագրի շրջանակներում իրականացվող շարժունության գործընթացները ՀՀ տարբեր բուհերում: Իսկ նոյեմբերին Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում տեղի ունեցավ Էրազմուս+ Բարձրագույն կրթության ոլորտում կարողությունների զարգացման ծրագրի դիմում հայտի ներկայացման վերաբերյալ աշխատաժողով, որի նպատակը այդ ծրագրերի կազմելու և դիմելու կարողությունների զարգացումն էր:

ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

2019-20 ուս. տարում ՀԱԱՀ աշխատակիցներն ու ուսանողները հնարավորություն են ունեցել մասնակցել վերապատրաստումների, դասընթացների և միջազգային

համաժողովների և հանդիպումների: Շարժունության և գործուղումների ծանրակշիռ մասն իրականացվել է Էրազմուս+ ծրագրի շրջանակներում:

Գործուղումներ (ուսանողներ)

Ծրագիր/պայմանագիր	Քանակ	%
Erasmus+ ՀԳ1	23	72
Erasmus+ ՀԳ2	8	25
Այլ (գիտաժողով, գիտական աշխատանք)	1	3
Ընդամենը	**32**	**100**

Գործուղումներ (դասախոսներ և վարչական անձնակազմ)

Ծրագիր/պայմանագիր	Քանակ	%
Erasmus+ KA1	6	9
Erasmus+ KA2 (որից 1-ը՝ ոչ համալսարանական ծրագրով)	10	15
BOAA	1	2
Biodiversity Information for Development	1	2
Այլ (գիտաժողով, սեմինար)	48	72
Ընդամենը	**66**	**100**

ՀԱԱՀ ժամանումներ (արտասահմանցի դասախոսներ, վարչական անձնակազմ, այլ)

Ծրագիր/պայմանագիր	Քանակ	%
Erasmus+ KA1	4	100
Ընդամենը	**4**	**100**

ՄԿԴ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակաշրջանում ՀԱԱՀ-ն զարգացրել և ընդլայնել է իր համագործակցությունը արտասահմանյան համալսարանների և միջազգային

կազմակերպությունների հետ՝ ամրապնդելով հինը և ստեղծելով նոր կապեր: ՄԿԴ-ն նախորդ տարիների նման առավելագույնս տարածել է միջազգային փոխանակման և դրամաշնորհային ծրագրերի վերաբերյալ առկա տեղեկատվությունը: Աշխատանքների թափանցիկության և տեղեկատվության տարածման արդյունավետության բարձրացման ուղղությամբ բարելավել է ՀԱԱՀ կայքի՝ միջազգայնացմանը վերաբերվող բաժինը: Այն ներկայումս ավելի գրավիչ է և ներկայացուցչական:

Այս տարի առաջին անգամ ՄԿԴ-ի նախաձեռնությամբ ՀԱԱՀ-ն՝ որպես գլխավոր դիմամատու և համակարգող կազմեց և ներկայացրեց 2 Էրազմուս+ ՀԳ2 CBHE ծրագրեր: 2020 թ. մայիս-հունիս ամիսներին ՄԿԴ աշխատակիցների կողմից պատրաստվեց մեր համալսարանին համապատասխանող միջազգային դրամաշնորհային ծրագրերի բազա, մշակվեցին 5-6 տարաբնույթ նախագծի առաջարկներ (ուղղությունները՝ անասնաբուժություն, soft skills, կլիմայի փոփոխություն, կենդանիների էթոլոգիա, հեռավար ուսուցում) և ներկայումս աշխատանքներ են տարվում արտերկրյա գործընկերներ գտնելու ուղղությամբ: Վերոհիշյալ ծրագրային առաջարկները պատրաստվել են տարաբնույթ դրամաշնրոհային ֆոնդերի դիմելու համար. OIE, Visegrad+, Volkswagen Foundation, Norad, EIT Food և այլն: Ցավոք, հաշվի առնելով ամբողջ աշխարհում առկա համաճարակային իրավիճակն ու համալսարանների մեծ մասի՝ օնլայն հարթակ անցնելու հանգամանքը, միջազգային համալսարանները փոքր-ինչ պասիվ են նոր ծրագրերին մասնակցելու տեսակետից: ՄԿԴ-ն նախաձեռնել է նոր բնույթի ծրագրի կազմում՝ (Visegrad+), որի ուղղությամբ ներկայումս տարվում են աշխատանքներ:

Միջազգային կապերի դեպարտամենտը՝ աշխատանքների թափանցիկության և տեղեկատվության տարածման արդյունավետության բարձրացման ուղղությամբ բարելավել է ՀԱԱՀ կայքի՝ միջազգայնացմանը վերաբերվող բաժինը: Ամեն տարի դեպարտամենտի պաշտոնական ֆեյսբուքյան էջում և ՀԱԱՀ կայքում տեղադրվում են միջազգային ծրագրերի վերաբերյալ տարաբնույթ հայտարարություններ. Էրազմուս+ ՀԳ1 ծրագրի մրցույթներ, Էրազմուս+ ծրագրի մասնակցիների լավագույն փորձ, Էրազմուս+ ՀԳ2 ծրագրեր, տարբեր մրցույթներ, կրթաթոշակներ, տեսանյութեր և այլն: 2019-20 ուս. տարում ՄԿԴ-ի կողմից տեղադրվել են շուրջ 184 նյութեր, որոնցից 26-ը եղել

են Էրազմուս+-ի մրցույթների հայտարարություններ, 24-ը՝ շարժունության մասնակիցների հոդվածներ, իսկ մնացածը՝ այլ բնույթի տեղեկություններ:

Շարժունության յուրաքանչյուր մասնակից վերադարձից հետո լրացնում է ՄԿԴ-ի կողմից տրամադրվող առցանց հարցաշարը, որով ՄԿԴ-ն վերհանում է շարժունության գրոծընթացի թույլ և ուժեղ կողմերը, վերլուծում արդյունքներն ու մշակում թույլ կողմերի վերացման ծրագրեր:

Հիմք ընդունելով ՄԿԴ-ի կողմից կատարվող պարբերական մոնիթորինգն ու դրանց արդյունքները, ՀԱԱՀ-ի միջազգային համագործակցության հետագա զարգացման և միջազգային հեղինակության բարձրացման նպատակով անհրաժեշտ է՝

1. Ուսանողների և աշխատակիցների շրջանում բարձրացնել օտար լեզվի իմացության մակարդակը: Օրինակ՝ շարժունության շատ մրցույթներ ուղղակի թափուր են մնում կամ մասնակցում են օտար լեզվի իմացության ոչ բավարարար մակարդակով մասնակիցներ:
2. Դասախոսների շրջանում ուժեղացնել միջազգային ծրագրեր կամ ծրագրային առաջարկներ գրելու կարողությունները: Դա անհրաժեշտ է այն տեսակետից, որ նեղ մասնագիտական ծրագրերին դիմելու դեպքում կարողանան կազմել և ներկայացնել ծրագրային փաթեթներ:
3. Ստեղծել օտար լեզվով դասավանդման կրթական ծրագրերի բազա և տեղեկատվական նյութեր: Դրսից տարբեր մարդիկ ցանկություն են հայտնում սովորել ՀԱԱՀ-ում, սակայն դեռևս բացակայում է օտարալեզու ծրագրերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվական բազան:

S	W
• միջազգային փոխանակման և դրամաշնորհային ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության տարածում • դեպարտամենտի աշխատակցիների ակտիվ գործունեություն	• օտար լեզվին տիրապետող ուսանողների և աշխատակիցների ոչ բավարար քանակ • համապատասխան ուսումնական ծրագրերի, ընդունելության կարգի, համապատասխան վարձավճարների

	բացակայություն օտարերկրյա ուսանողների համար • ոչ բավարար սեփական միջոցներ տարբեր վերապատրաստման դասընթացներին ՀԱԱՀ աշխատակցիների և ուսանողների մասնակցությունը ֆինանսավորելու համար • ոչ բավարար կենցաղային պայմաններ ՀԱԱՀ հանրակացարանում
O	T
• ագրարային ոլորտի միակ բուհը ՀՀ-ում • ագրարային ոլորտի քաղաքականության խթանում կառավարության կողմից	• ուսանողների թվաքանակի պակասում • որոշ ԵՄ համալսարանների կողմից համագործակցության պայմանների խախտում • ֆորս-մաժորային իրավիճակներ (COVID-19)